ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունիսի 29-ից հուլիսի 3-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Դրեզդեն) գործուղման արդյունքների մասին

1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Մարգարիտ Մաթևոսյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2026 թվականի հունիսի 29-ից հուլիսի 3-ը, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Դրեզդեն)

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում «Գյոթե ինստիտուտ»

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Լեզու, երկրագիտություն և մշակութային ուսուցում թեմայով վերապատրաստման ծրագրին՝ կրթության միջազգայնացման, գերմաներենի ուսուցման ոլորտում Գերմանիայի առաջավոր փորձի ուսումնասիրման, ինչպես նաև հայ-գերմանական կրթական համագործակցության զարգացման նոր հնարավորությունների բացահայտման նպատակով:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Վերապատրաստման ընթացքում քննարկվել են՝

- կրթության ոլորտում մշակութային և լեզվական քաղաքականության ժամանակակից մոտեցումները,
- Գերմանիայում երկրագիտական բաղադրիչի ինտեգրումը հանրակրթական կրթության մեջ,
- դպրոցների և մշակութային հաստատությունների համագործակցության արդյունավետ մոդելները,
- կրթական գործընթացներում թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության կիրառման հնարավորությունները,
- կրթական միջազգային ծրագրերի իրականացման և փորձի փոխանակման արդյունավետ ձևաչափերը,
- միջմշակութային հաղորդակցության դերը կրթական համագործակցության զարգացման գործում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Վերապատրաստման շրջանակում մասնակցել եմ «Գյոթե ինստիտուտի» կազմակերպած մասնագիտական քննարկումներին, գործնական աշխատարաններին և փորձի փոխանակման հանդիպումներին, որոնց մասնակցում էին տարբեր երկրների կրթության ոլորտի ներկայացուցիչներ:

Այցի ընթացքում ծանոթացել եմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կրթական և մշակութային քաղաքականության իրականացման փորձին, մասնավորապես՝ հանրակրթության մեջ երկրագիտական և մշակութային բաղադրիչների ինտեգրման մեխանիզմներին, կրթական հաստատությունների և մշակութային կազմակերպությունների համագործակցության ձևերին, ինչպես նաև միջազգային կրթական ծրագրերի կազմակերպման փորձին:

Լայպցիգ և Դրեզդեն քաղաքներում իրականացված ճանաչողական և մասնագիտական այցերի ընթացքում ուսումնասիրվել են պատմամշակութային ժառանգության

օգտագործման արդյունավետ մեթոդները կրթական գործընթացներում, ինչպես նաև մշակութային հաստատությունների համագործակցության փորձը կրթության ոլորտի հետ:

Քննարկվել են նաև թվային կրթական միջավայրի զարգացման, արհեստական բանականության կիրառման, միջազգային համագործակցության ընդլայնման և կրթական ծրագրերի արդիականացման հարցեր:

Գործուղման ընթացքում ձեռք բերված փորձը կարող է կիրառվել Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև կրթության ոլորտում համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման, գերմաներենի ուսուցման զարգացմանն ուղղված նախաձեռնությունների խթանման, միջազգային կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև կրթության միջազգայնացման քաղաքականության իրականացման գործընթացում:

Վերապատրաստման ընթացքում հաստատված մասնագիտական կապերը կարող են հիմք հանդիսանալ հետագա համագործակցության, համատեղ ծրագրերի, փորձագիտական փոխանակումների և ուսուցիչների վերապատրաստման նոր նախաձեռնությունների իրականացման համար:

8. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Մարգարիտ Մաթևոսյան

07 հուլիսի 2026 թ.